ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող. 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որակի կառավարումն ուղղված է երկարաժամկետ հաջողության նվաճմանը՝ հաճախորդների, ինչպես նաև ներդրողների, Ընկերության աշխատողների և հասարակության պահանջմունքներն ու ցանկությունները բավարարելու միջոցով: Որակի քաղաքականությունը Ընկերության առաքելությունից, ռազմավարությունից և նպատակներից բխող սկզբունքների և արժեքների արտահայտումն է:

Ընկերության Որակի քաղաքականության հիմքում ընկած սկզբունքներն ու արժեքները.

- ապահովագրական ծառայությունների լայն տեսականու տրամադրում՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և վերահսկող մարմինների պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով միջազգային փորձը, հաճախորդների պահանջներն ու սպասումները
- հաճախորդների պահանջմունքների բավարարում, ինչը հանդիսանում է Ընկերության կարևորագույն նպատակը, որին հասնելու համար ղեկավարությունը գործում է նպատակաուղղված, գիտակցաբար և վճռական
- կոմպետենտ անձնակազմի ապահովում (գործարար մշակույթի և աշխատանքային կարգապահության բարձր մակարդակ, հաճախորդների նկատմամբ ուշադիր և բարեհամբույր վերաբերմունք), ինչը հանդիսանում է հաճախորդների բավարարվածությանը հասնելու գլխավոր գրավականը
- գործունեության արդյունավետության գնահատում, ռեսուրսների արդիականացում ու օպտիմալացում, մշտադիտարկումներ կատարելագործման հնարավորության բացահայտման նպատակով
- գրանցումների համակարգի կառավարում՝ փաստերի վրա հիմնված որոշումների կայացման նպատակով
- որակի կառավարման համակարգի կառավարման գործում կատարյալ ներդաշնակության ձեռքբերում՝ գործընթացային և համակարգային մոտեցումների կիրառման միջոցով
- փորձված և գնահատված մատակարարների լայն ցանցի ստեղծում, ինչը որակի կառավարման համակարգի պահպանման կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Սույն Քաղաքականության իրագործումը, որակի նպատակներին հասնելը, որակի ոլորտում խնդիրների լուծումն ապահովվում է ISO 9001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան՝ Որակի կառավարման համակարգի ներդրմամբ:

TÜV AUSTRIA CERTIFIED EN ISO 9001 Certificate No. 2019021311450 TÜV AUSTRIA CERT GMBH
TÜVRheinland CERTIFIED
ISO/IEC 27001:2013 Management System
www.tuv.com ID 9108645522